# Հաղորդակցության ուժը սեփական օրակարգն առաջ մղելու գործում

**Ցանցային հանդիպման արդյունքների վերլուծություն**

Երևան
2020

## Ներածություն

2020թ.սեպտեմբերի 8-ին կայացավ ԴԱՏԱ ծրագրի շրջանակում կազմակերպված 2-րդ ցանցային հանդիպումը, որի նպատակն էր մասնակիցների հետ քննարկման միջոցով պարզել, թե ինչպես են հայաստանյան ՔՀԿ-ներն օգտագործում հաղորդակցության միջոցներն ու տվյալների լեզուն սեփական օրակարգն առաջ մղելու նպատակով և հզորացման ինչ կարքներ ունեն այդ գործընթացն առավել ազդեցիկ դարձնելու համար: Քննարկմանը մասնակցել է հետազոտական կազմակերպությունների, թինք թանքերի, ԶԼՄ-ների, տեղական ՀԿ-ների և պետական օղակների 25 ներկայացուցիչ:

Սույն համառոտագիրն ամփոփում է քննարկման ընթացքում մասնակիցների հնչեցրած գաղափարների և կարծիքների վերլուծության հիմնական արդյունքները. մասնավորապես՝ 1) հայաստանյան ՔՀԿ-ների կողմից սեփական օրակարգն իշխանություններին պարտադրելու միջոցների, 2) այդ գործընթացի վրա ազդող գործոնների, 3) հաղորդակցության ոլորտի մարտահրավերների և 4) ՔՀԿ-ների՝ սեփական օրակարգն իշխանություններին պարտադրելու գործում հաղորդակցության արդյունավետությանը նպաստող քայլերի վերաբերյալ:

## ՔՀԿ-ների կողմից սեփական օրակարգն իշխանություններին պարտադրելու միջոցները

Սեփական օրակարգն առաջ տանելու համար հայաստանյան ՔՀԿ-ների կողմից ընտրված միջոցները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի, որոնցից յուրաքանչյուրը կիրառելի է երկու տարբեր ռազմավարությունների դեպքում. 1) իշխանությունների հետ անմիջական երկխոսություն և 2) իշխանությունների հետ միջնորդավորված երկխոսություն/հաղորդակցություն (տե՛ս Գծապատկեր 1):




Գծապատկեր 1.

## 2 Իշխանության հետ միջնորդավորված երկխոսություն/հաղորդակցություն

- Ցույց, հանրային բողոք, անհնազանդություն
- Սեփական օրակարգի հանրայնացում, խնդրի վերաբերյալ հանրության տեղեկացվածության բարձրացում (այդ թվում՝ հետևողական աշխատանք մեդիայի հետ)
- Սեփական օրակարգի շուրջ միջազգային կառույցների հետ համագործակցություն և ազդեցության միջազգային մեխանիզմների կիրառկում
- Սեփական օրակարգի համար նպաստավոր դիսկուրսիվ դաշտի ձևավորում

Իշխանությունների հետ անմիջական երկխոսության դեպքում ՔՀԿ-ները, որպես իրենց օրակարգն առաջ տանելու միջոց, իշխանություններին են ներկայացնում իրենց հետաքրքրության խնդիրներին անդրադարձող հանրային քաղաքականության հետազոտությունների հիման վրա ձևավորված քաղաքականության բարեփոխումների առաջարկներ: Քննարկման մասնակից որոշ ՔՀԿ-ներ, որպես միջոց մատնանշել են կառավարությանը, ԱԺ -ին և պետական այլ օղակներին կից աշխատանքային խմբերում, հանձնաժողովներում, ֆորումներում և այլ հանրային հարթակներում իրենց ներգրավումը: Այս հարթակների հանդեպ որոշ քննադատություն ունենալով հանդերձ, ՔՀԿ-ները գտնում են, որ դրանք հնարավորություն են տալիս իրենց ձայնն անմիջականորեն հասցնել պետական կառույցների ներկայացուցիչներին: Սեփական օրակարգն առաջ տանելու միջոց է նաև պետական կառույցների կողմից հանրայնացված քաղաքականության նախագծերին ակտիվորեն արձագանքելը (օրինակ՝ e-draft հարթակում): ՔՀԿ-ները ոչ միանշանակ են գնահատում իրենց կողմից կիրառվող մյուս միջոցը՝ որոշում կայացնողների և նրանց թիմերի ներկայացուցիչների հետ բանակցությունները: Մի մարդու գործոնով պայմանավորված՝ սա, մի կողմից կարող է արագ և դրական արդյունքի հանգեցնել, մյուս կողմից՝ հետևանք լինելով հաղորդակցության և որոշումների կայացման ինստիտուցիոնալ ընթացակարգերի թերկայացածության՝ նվազեցնել աշխատանքի հետևողականությունը և արդյունքների կայունությունը:

Իշխանությունների հետ միջնորդավորված երկխոսության/հաղորդակցության դեպքում կիրառվող միջոցների մեջ ՔՀԿ-ներն առանձնացրել են ցույցերի, հանրային բողոքների, անհնազանդության ակցիաների կազմակերպումը: Միջոցների այս խմբի պարագայում, թեև կոչերը և բարձրաձայնված օրակարգերն ուղղված են իշխանություններին, այնուամենայնիվ, հաճախ, անմիջական երկխոսության բնույթ չեն կրում: Միջնորդավորված հաղորդակցության միջոցով օրակարգն առաջ տանելու եղանակներից է նաև սեփական օրակարգի հանրայնացումը, խնդրի վերաբերյալ հանրության տեղեկացվածության և համակրանքի բարձրացումը (այդ թվում՝ աշխատանքը մեդիայի հետ), ինչպես նաև սեփական օրակարգի շուրջ միջազգային կառույցների հետ համագործակցությունը և ազդեցության միջազգային մեխանիզմների կիրարկումը: Երկարաժամկետ ռազմավարության տեսանկյունից, որպես միջոց մատնանշվել է նաև սեփական օրակարգի համար նպաստավոր դիսկուրսիվ դաշտի ձևավորումը՝ ցանկալի սցենարների և գաղափարների արմատավորումն ու տարածումը:

**ՔՀԿ-ների՝ սեփական օրակարգն իշխանություններին պարտադրելու գործընթացի վրա ազդող գործոնները**

Կան մի շարք գործոններ, որոնք ազդում են ՔՀԿ-ների կողմից սեփական օրակարգն իշխանություններին պարտադրելու գործընթացի վրա (տե՛ս Գծապատկեր 2.):

**Գծապատկեր 2.**




Ինչպես ցույց է տալիս Գծապատկեր 2-ը, սեփական օրակարգն իշխանություններին պարտադրելու գործընթացի վրա ազդող գործոնների շարքում, քննարկման մասնակից ՔՀԿ-ները արժևորել են հաղորդակցության միջոցի և լեզվի արդյունավետ ընտրությունը: Սեփական օրակարգի մասին խոսելիս կարևոր է արդյունավետ ընտրել հաղորդակցության լեզուն և միջոցը: Պայմանավորված նրանով, թե ինչ լսարանի է ուղղված խոսքը և օրակարգն առաջ մղելու ինչ ռազմավարություն է ընտրվել, որպես հաղորդակցության լեզու կարող է ընտրվել փաստերի լեզուն (հանրային քաղաքականության համառոտագրեր, հետազոտությունների և վերլուծությունների ամփոփագրեր և այլն), վիզուալ լեզուն, էմոցիաների լեզուն, անհնազանդության և վերջնագրերի լեզուն և այլն: ՔՀԿ-ները բավականին զգուշավոր և քննադատական էին սոցիալական ցանցերի (մասնավորապես՝ ֆեյսբուքի) նկատմամբ, որոնք մեր օրերում հաճախ են հանդես գալիս որպես հաղորդակցության միջոց՝ պարտադրելով խաղի սեփական կանոններն ու լեզուն: ՔՀԿ-ները նշում են, որ սոցիալական ցանցերի միջոցով հաղորդակցության առկա բարձր ինտենսիվությունն անկատար ինստիտուցիոնալ մեխանիզմների արդյունք է և, դրական կողմերով հանդերձ, ստեղծում է նաև էական մարտահրավերներ: Մասնավորապես, սոցիալական ցանցերի միջոցով իշխանության ներկայացուցիչների հետ հաղորդակցությունը մի կողմից կրճատում է որոշում կայացնողների և շահառուների միջև հեռավորությունը՝ մեծացնելով շահառուների՝ լսելի լինելու հնարավորությունը, մյուս կողմից՝ սահմանափակում կառուցողական երկխոսության և արդյունավետ աշխատանքի հնարավորությունը:

ՔՀԿ-ները, որպես սեփական օրակարգն իշխանություններին պարտադրելու գործընթացի վրա ազդող գործոններ, կարևորել են նաև իշխանության հետ հաղորդակցության խողովակների արդյունավետությունը, երկկողմանի (որոշում կայացնողից դեպի հանրություն և հանրությունից դեպի որոշում կայացնող) հաղորդակցության առկայությունը: Արդյունավետ երկկողմանի հաղորդակցությունը ենթադրում է նաև երկխոսության և համագործակցության հնարավորություն, այլ ոչ թե առաջարկվող նախագծի վերաբերյալ զուտ համաձայնություն կամ անհամաձայնություն. մի բան, որն այսօր, ինչպես նշում են ՔՀԿ-ները, իշխանությունների հետ հաղորդակցության գործընթացում հաճախակի հանդիպող պրակտիկա է:

Սեփական օրակարգն իշխանություններին պարտադրելու համար կարևոր է նաև ՔՀԿ-ների՝ օրակարգն առաջ մղելու արդյունավետ ռազմավարություններ մշակելու, արդյունավետ միջոցներ և լեզու ընտրելու կարողություններն ու ռեսուրսները, համախոհների և գործընկերների լայն ցանցը և այդ ցանցի կազմակերպվածությունը, ինչպես նաև դիսկուրսիվ, սոցիալ-տնտեսական և քաղաքական միջավայրերի նախադրյալները (մասնավորապես՝ համավարակ, պատերազմական իրավիճակ, արտակարգ կամ ռազմական դրություն, դրանցից բխող սահմանափակումներ, տարածված դիսկուրսներ և այլն):

### ՔՀԿ-ների՝ հաղորդակցության ոլորտի մարտահրավերները

ՔՀԿ-ները նշում են, որ սեփական օրակարգն առաջ մղելիս հաճախ բախվում են հաղորդակցության մի շարք մարտահրավերների. մասնավորապես՝ հանրային խոսքի մանիպուլյացիաներ, պետական կառույցների հետ հաղորդակցության ինստիտուցիոնալ բացեր, սոցիալական ցանցերում (մասնավորապես՝ Ֆեյսբուքում) հաղորդակցության առանձնահատկություններ, ԶԼՄ միջավայրի և օրակարգերի առանձնահատկություններ, ՔՀԿ-ների կարողությունների և ռեսուրսների սղություն (տե՛ս Գծապատկեր 3):

**Գծապատկեր 3.**



Հատկապես 21-րդ դարի, այսպես կոչված՝ հետճշմարտության ժամանակաշրջանում, մի կողմից կարևորվում է խոսքի փաստարկվածությունը, մյուս կողմից՝ խոսքային և այլ մանիպուլյացիաներն ու շահարկումները կաշկանդում են հետազոտահեն և փաստահեն միտքը: Հատկապես էմոցիաների շահարկմամբ մանիպուլյացիաները բավականին բարդ է հաղթահարել փաստահեն խոսքի միջոցով, ինչը լուրջ մարտահրավեր և էթիկական երկընտրանքներ է ստեղծում ՔՀԿ-ների համար: Հայաստանում, սրան ավելանում է նաև որոշ լրատվամիջոցների կողմից հանրային բացասական և ապակառուցողական արձագանքի հրահրումը, հակադեմոկրատական և ազգայնական պրոպագանդան, որն անկաշկանդ իրականացվում է մեդիա դաշտում՝ մասնագիտական և էթիկական բարեխղճության վերաբերյալ հաշվետվողականության բացակայության և այլ պատճառներով: Հայաստանում ՔՀԿ-ների՝ սեփական օրակարգն առաջ տանելու հարցում հաղորդակցության արդյունավետ կազմակերպման ազդեցիկ մարտահրավերներ են նաև պետական կառույցների ներսում, դրանց միջև, պետական կառույցների և հանրության, մինչև անգամ առանձին ՔՀԿ-ների ներսում հաղորդակցության արդյունավետ մեխանիզմների բացերը, ինչպես նաև ՔՀԿ-ների կարողությունների պակասը և ռեսուրսների սղությունը:

**ՔՀԿ-ների՝ սեփական օրակարգն իշխանություններին պարտադրելու գործում հաղորդակցության արդյունավետությանը նպաստող քայլեր**

Քննարկման մասնակից ՔՀԿ-ները գտնում են, որ սեփական օրակարգն իշխանություններին պարտադրելու գործում ավելի մեծ արդյունքներ գրանցելու համար որոշ քայլեր են անհրաժեշտ: Հաղորդակցության ոլորտում անհրաժեշտ քայլերի շարքում նրանք, մասնավորապես, առանձնացրել են իշխանություն-հանրություն հաղորդակցության խողովակների ինստիտուցիոնալ զարգացմանն ուղղված աշխատանքը, հաղորդակցության ոլորտի իրավական և և ինստիտուցիոնալ բարեփոխումները (ընթացակարգերի զարգացում, էթիկական խնդիրների վերահսկողության հզորացում, հանրային խոսքի հանդեպ պատասխանատվության, ատելության խոսքի մասին օրենք և այլն), քաղաքականությունների տվյալահենության կարևորության բարձրացմանն ուղղված աշխատանքը, ընդհանուր դիսկուրսիվ դաշտի բարեփոխումը (հակաարևմտյան, հակադեմոկրատական, հակազենդերային, պահպանողական, կոնսպիրոլոգիական և այլ ապակառուցողական գաղափարների հաղթահարում), ինչպես նաև ՔՀԿ-ների՝ հաղորդակցության կարողությունների և ռեսուրսների զարգացումը (տե՛ս Գծապատկեր 4):

Գծապատկեր 4




Որպես ամփոփում նշենք, որ ԴԱՏԱ ծրագրի շրջանակում կազմակերպված 2-րդ ցանցային հանդիպման մասնակից ՔՀԿ-ները պատրաստակամ էին ոչ միայն բարձրացված խնդիրների վերաբերյալ իրենց նկատառումներով և փորձով կիսվելու, այլ նաև բարձրաձայնված մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ ջանքերը միավորելու հարցում: